ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆԵԼՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ –ՍԻՎԻՏԱՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հիմք ընդունելով

- Հանրակրթության մասին ՀՀ օրենքի (ընդունված 10.07.2009) 5-րդ հոդվածի 3-րդ կետով ստանձնած պարտավորությունը՝ հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովման վերաբերյալ, ինչպես նաև՝
- Եվրոպայի խորհրդի՝ ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության վերաբերյալ Խարտիան (անդամ-պետություններին ուղղված ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (2010)7 առաջարկությունը),

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան), և Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Հայկական-ՍԻՎԻՏԱՍ), այսուհետ կողմեր, միջև կնքվող սույն Փոխըմբռնման հուշագրի կնքմամբ (այսուհետ՝ Հուշագիր) հաստատում է կողմերի պատրաստակամությունը՝ օժանդակելու ս.թ. մայիսից մինչև 2014 թ. հունիսը Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի միջոցով Վայոց ձորի մարզի Վայքի, Ջերմուկի և Եղեգնաձորի տարածաշրջաններում

իրագործվելիք <<Ժողովրդավարական քաղաքացիության կրթության հզորացում>> ծրագրին (այսուհետ՝ Ծրագիր):

1. Փոխըմբռնման հուշագրի առարկան

Սույն Հուշագիրը կոչված է՝

- Համակարգելու Մարզպետարանի և Հայկական-ՍԻՎԻՏԱՍ-ի միջև արդյունավետ համագործակցությունը,
- Հաստատելու Ծրագրի իրականացման ոլորտում կողմերի պատասխանատվությունը՝ աջակցելու ՀՀ-ում հանրակրթության համակարգի բարելավմանը, դպրոցներում ժողովրդավարական կրթության խթանմանը:

2. Ծրագրի նպատակը

Ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել Վայոց ձորի մարզի դպրոցներում որոշումների կայացման մեխանիզմների ժողովրդավարացմանը և համայնքային խնդիրներում աշակերտների ավելի ակտիվ ներգրավվածության խթանմանը:

3. Ծրագրի խնդիրները

- Իրականացնել Ժողովրդավարական քաղաքացիության կրթության իրավիճակի հետազոտություն, մշակել դպրոցների ժողովրդավարական կառավարման և քաղաքացիական գրագիտության վերաբերյալ գրականություն:
- Մարզում կազմակերպել մի շարք կլոր սեղան-քննարկումներ և դասընթացներ՝ դպրոցների վարչական ոլորտի աշխատողների, ուսուցիչների, կրթության ոլորտում աշխատող պետական և հասարակական գործիչների մասնակցությամբ:
- Օժանդակել աշակերտներին՝ իրենց իսկ կողմից մշակված համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև՝ վերահսկել այդ աշխատանքը:

4. Կողմերի պատրաստակամությունն ու դերը

4.1. Հայկական-ՍԻՎԻՏԱՍ-ի պատրաստակամությունն ու դերը

- Կազմակերպել և իրականացնել Ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները՝ Ծրագրով սահմանված գործողությունների ժամանակացույցին համապատասխան:

4.2. Մարզպետարանի պատրաստակամությունն ու դերը

- Օժանդակել Հայկական-ՍԻՎԻՏԱՍ, ՀԿ-ին՝ Ծրագիրն արդյունավետ իրականացնելու հարցում
- Ապահովել ծրագրի իրականացման ընթացքում Մարզպետարանի և համապատասխան այլ կրթական կառույցների հաստատությունների ակտիվ մասնակցությունը և համագործակցությունը:
- Մոբիլիզացնել կրթական ոլորտի ռեսուրսները, Ծրագրի հիմքում ընկած խնդիրների շուրջ տրամադրել համապատասխան խորհրդատվություն և տեղեկատվություն:
- Մարզպետարանի աշխատակազմից նշանակել ներկայացուցիչ:
- Հնարավորության դեպքում, օժանդակել ծրագրով նախատեսված միջոցառումների համար տարածքի ապահովման հարցում:

5. Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է դադարեցվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ երկու ամիս առաջ տեղեկացնելով մյուս կողմին:
6. Սույն հուշագրի տևողությունն է՝ 15.07.2013-01.07.2014թթ.:

Ի հաստատում վերոհիշյալի՝ կողմերն ի դեմս իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների ստորագրում են իրենց անունից սույն Փոխըմբռնման հուշագիրը և հանձնում են այն 2013 թ. _____ ամսաթվով:

Հուշագիրը ստորագրվում է 2 բնագիր օրինակից:

Ալեքսանդր Շագաֆյան, գործադիր տնօրեն

Ժողովրդավարական կրթության

հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ ՀԿ

(ստորագրություն)

Էդգար Ղազարյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետ

(ստորագրություն)